



# ՀԵՏՈՎԱՇ «ԳԱԼՈՒՅԱ» ՀԱԽԱՐԱԿ ԱՐԿՈՒ ՓՈԽԱՐԵՆ

Ս. ՓՈՇՈՏՅԱՆ

Տարիներ շարունակ ասֆալտե ճանապարհն անցնում էր փոքրիկ այս շենքի մոտով ու չեղ նկատում այն: Ճանապարհը սուրում էր արագաթափ, ու փոքրիկ այդ շենքը ոչ մեկի հայացքը չեղ ծգում դեպի իրեն: Քչերին էր հայտնի, որ ծառերի արանքից հազիվ երևացող ալդ շինության վրա այսպիսի ցուցատախտակ կա: «Հայկական ռեսպուբլիկայի շերամապահության գիտահետազոտական կայան»: Այո, շատ քչերին էր հայտնի:

Բայց ահա... Ոչինչ չեղ պատահել: Ոչ հերթափային պալատ էր դարձել այդ փոքրիկ շենքը, ոչ էլ նման մի բան: Այս կանգնել էր այնպես, ինչպես կար ու ծառերի արանքից ճանապարհն էր նայում: Բայց ահա ճանապարհն այդտեղ ասես սկսեց դանդաղեցնել իր ընթացքն, ու մարդկային տարբեր հայացքներ սկսեցին ինչ-որ բան փնտրել այնտեղ, թթենիների այգու մեջ: Փնտրում էին, դիմում նարեւանին, ավտորուսի տոմսավաճառին:

— Այդ ի՞նչ կայան է, որ նոր մերենսայի գյուտ է արել...

Տոմսավաճառն արդեն կարող էր բավարարել մարդկանց հետաքրքրությունը: Տուրիստական խմբերի գիղերն էլ Երևանից Էջմիածնին գնալիս ճանապարհի այդ մասում նոր թեմա ավելացրին իրենց վրուցյաներին:

— Նայեցեք աջ... Ահա այն փոքր շենքում է աշխարհում առաջին անգամ լուծվել շերամապահության մերենայացման հարցը:

Շերամապահության ու բնական մետաքսի արտադրությամբ դարեր շարունակ վրաղվել են աշխարհի շատ երկրներ: Չինաստանը շերամի հայրենիքն է, ճապոնիան նույնպես հայտնի է շերամի արտադրության մեծ մասշտաբներով, իսկ Սովետական Միությունում 11 ռեսպուբլիկաներ են վրաղվում շերամապահությամբ: Այդ խիստ արժեքավոր արտադրությամբ վրաղվում են Խտալիայում, Ֆրանսիայում, Հնդկաստանում, Բուլղարիայում, Իրանում և աշխարհի շատ այլ երկրներում: Ու որքան էլ տարօրինակ թվա, մինչև օրս բոլոր այդ երկրներում գոյություն ունեցող գիտական հիմնարկներին, ինստիտուտներին, առանձին գիտնականների չեղ հաջողվում գտնել շերամի արտադրության մերենայացման ուղին: Բոլոր փորձերն ավարտվում էին անհաջողությամբ:

### Յավալի էր:

Տեխնիկայի ու գիտության ժամանակակից առաջընթացի այս հոյակապ դրույմ, երբ թիչ է մնացել, որ մարդիկ արևը մոտ բերեն իրենց դաշտերին ու թաց ամպերից դեպի այգիները ջրի խողովակներ անցկացնեն, շերամապահությունը շարունակում էր մնալ գյուղատնտեսության ամենաաշխատատար, դժվարին, ոչ հիգիենիկ ու թանկ արտադրություններից մեկը:

Բայց ահա, անցյալ տարվա վերջերին, Սովետական Միության կենտրոնական թերթերում երևացին փոքրիկ ինֆորմացիաներ այն մասին... Սակայն պատմենք ներթով:

**Կենսաբանական** գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սանատրուկ Սարգսյանի առջև հարցը դրված էր այսպես. կամ Երևանի համալսարանի կենդանաբանության ամբիոնի վարիչ ու դասախոսական աշխատանք, կամ շերամապահության գիտահետազոտական կայանի դիրեկտոր: Պետք էր ընտրել: Եվ ահա, առանց տատանվելու, գիտնականն ընտրում է երկրորդը: Ընկերներից շատերն այդ ընտրության վրա տարակուած վեր քաշեցին ուսերը: Կայանում և աշխատավարձն էր համեմատաբար ցածր, և մի քանի հոգուց կապմված գիտական նոր կոլեկտիվը հավիկ թե պրոբլեմատիկ լուրջ հարցեր կարողանար լուծել: Բացի այդ, Հայաստանի համար շերամապահությունն ամենքան էլ մեծ հեռանկարներ չեր խոստանում:

Բայց այս բոլորը չին կարող են պահել գիտնականին: Հակառակը, Սանատրուկ Սարգսյանին հենց այդ էր գրավում: Առաջ տանել, զարգացնել եկամտաբեր այդ ճյուղը նաև Հայաստանում: Նրա պրատող, անհանգիստ միտքը տեսնում էր մեծ, շատ մեծ հեռանկարներ: Եվ ահա նորաստեղծ կայանի մի քանի հոգանոց կոլեկտիվն սկսեց ապրել լարված ու բեղուն աշխատանքային կյանքով: Անցնում էին տարիները, և մեկը մյուսի ետևից ավելանում էր կայանի գիտական արժեքավոր աշխատանքների թիվը: Ահա ստեղծվում են բարձր ցուցանիշներով շերամի նոր ցեղեր ու հիբրիդներ: Շուտով թթենիների կրկնապատկված այգիների մեջ աչքի են ընկնում անպոտղ, խոշոր ու փափուկ տերևներով նորահայտ ծառերը, առաջին հայկական թթենու տեսակը, որը 60 տոկոսով ավելացնում է որդակերակրման մթերատվությունը: Գիտական աշխատանքների ծավալին զուգընթաց աճում է և կայանի աշխատողների թիվը: 13 հոգուց բաղկացած գործունյա անձնակազմն իր մարտական «կապիտանի» գլխավորությամբ շուտով նոր հաջողությունների է հասնում: Մշակվում է վայրի թթենիների պատվաստի նոր եղանակ, որը սովորական պատվաստից մոտ երեք անգամ ավելի արագ է կատարվում ու ավելի էժան նստում: Եվ ահա մասնագիտական տեղեկագրերում հայտնվում է այսպիսի նոր տերմին, «ամառային, առանց կապի աշքապատվաստ» կամ ուղղակի՝ «պատվաստի հայկական մեթոդ»: Ահա և մեկ ուրիշ նորություն. թթենին բավացվում է էլեկտրաէներգիայի օգնությամբ արմատակալեցված կտրոնների միջոցով:

Հետաքրքիր ու արժեքավոր էին այս բոլոր աշխատանքները, սակայն Սանատրուկ Սարգսյանին ամենից շատ այլ բան էր հետաքրքրում: Մերենան: Վաղուց արդեն նա երակում, մտածում էր այնպիսի մի մերենայի մասին, որը կարողանար փոխարինել հազարավոր շերամապահների: Դեռ երեխա ժամանակից նրան լավ ծանոթ էր շերամապահի գործի ամեռջ դժվարությունը: Ղափանում, իրենց տանն էլ էին շերամի թթուրներ կերակրում, աճեցնում, ու ինըն էլ հաճախ էր օգնում





մեծերին: Այսպես որ, բոլորովին էլ պատահական չեր, եթե նա սովորելու գևաց ոչ այլ, քան հենց շերամապահական տեխնիկում, հետո էլ նույն գծով՝ ինստիտուտ և ասպիրանտուրա:

Որքան նա խորանում էր իր ընտրած մասնագիտության մեջ, այնքան ավելի էր մեծանում մերենա ստեղծելու նրա ձգտումը: Մերենա... բայց ինչպե՞ս: Զէ որ շերամը կենդանի է ու նրա հետ մերենայի լեզվով խոսելը շատ է բարդ: Ինչպես կենդանի այդ օրգանիզմներին հարմարեցնել մերենային: Սակայն մերենայի մասին մտածելուց առաջ պետք էր նաև հիանալի ճանաչել շերամի բիոլոգիան, ուսումնասիրել մեկ ամսում 14 հավաք անգամ մեծացող այդ թրթուրների պահանջները, նրանց բնավորությունն ու զարգացման առանձնահատկությունները: Երկար ուսումնասիրությունները Սանատրուկ Սարգսյանին հանգեցրին այն եղրակացության, որ մերենայի համար պետք են այնպիսի թրթուրներ, որոնք աճեն խիստ հավասարաշափ: Խոկ դրա համար... Ահա, թե որքան պարզ ու հասարակ է ամբողջ այդ գաղտնիքը, եթե այն արդեն գտնված է: Դրա համար ուղղակի պետք է նման ժառանգականություն ունեցող բոլոր շերամների համար լուսի, ջերմության, խոնավության հավասար պայմաններ ապահովել: Ինչպե՞ս... Դա արդեն կանի մերենան:

Ահա և պատրաստ է մերենայի առաջին սխեման: Թող որ այդ սխեմայում բավական առատ լինեին թերի կողմերը, բայց չէ որ գտնված էր բանալին: Մնում էր գործի տեխնիկական կողմը, այսինքն մնում էր «մարքագրել» ու կարգի բերել մերենայի տարեերակների վերաբերյալ մտքերը, նախագծերը և վերջապես պատրաստել այն:

Խոկ ո՞վ հանձն կառներ այդ գործը: Սկսվեցին որոնումները. համապատասխան մարդ գտնելը բավական դժվար դուրս եկավ:

Եվ ահա, մի գեղեցիկ օր, գիտնականի առանձնասենյակն է մտնում 40-ի մոտ, համակրելի արտաքինով մի մարդ և առաջարկում.

— Ասացեք, ձեզ ի՞նչ մերենա է պետք: Ես կպատրաստեմ:

Մարդը լուր լսում է բացատրությունները և գնում: Մի շաբաթ հետո նա վերադառնում է գործող մի մոդել հետոց: Պարզվում է, որ Գեորգի Մկրտչյանը մի նոր գյուտ է մերենայի ստեղծման ճանապարհին:

Գեորգին աշխատանքային իր կենսագրությունն սկսել է գործարանում: Փականագործի աշակերտից: Հետո դարձել է խառատ, սովորել է փականագործություն ու վերջապես կարողացել է իրականացնել իր երազանքը՝ ստանալ բարձրագույն կրթություն: Պոլիտեխնիկական ինստիտուտն ավարտելուց հետո էլ նա չի

թողել իր սիրած արհեստը: Դասավանդել է տեխնիկական ուսումնարանում և միաժամանակ աշխատել հաստոցի մոտ:

Իսկ այժմ նա իր մեկ ուրիշ երազանքի իրականացման ճանապարհին է: Սանատրով Սարգսյանի հետ աշխատում է մերենայի ստեղծման վրա: Սկզբում գործ դանդաղ էր առաջ գնում: Կայանի՝ ժամանակակից կահավորանքով լաբորատորիաները բոլորովին պիտանի չեն մետաղներ կտրելու, ծակելու ու նման գործերի համար: Զկային անհրաժեշտ գործիքներ ու նյութեր: Քիչ էր, այս: Բայց երբ այդ քչին միանում է մարդկային համառությունը, անհավատալի էնտուզիավոր, երբ գիտուրյան դոկտորն ու դիմումավոր խառաջը թեքերը ետ ծալած, օրերով մուրճ ու մետաղի հետ են գործ ունենում, այդ դեպքում արդեն բոլոր տեսակ գործիքների պակասն այնպես սարսափելի չի թվում: Նրանք աշխատում են լարված, որ ու գիշեր, չնկատելով կիրակին և արհամարհելով գրիպը: Նման գործում միայն այս երկուսի համատեղությունը կարող էր արդյունք տալ: Իսկ այդ արդյունքը հիմա կանգնած է նորակառույց «բնակարանում»՝ պարզ, հստակ արտաքինով, ու այնպիսին է, որ մինչև անգամ դժվար է նկարագրել: Թեթև մետաղյա կմախք, որ բռնում է մի սենյակի չափ տարածություն, իրար կողքի ու մի քանի հարկերով շարված արկդեր, որոնք թրթուրների «բնակարաններն» են և այլ հարմարանքներ: Պարզ ու հասարակ է թվում մերենան:

Իսկ ինչպես է աշխատում այն: Նույնպես շատ պարզ: Մերենան որոշակի ռեժիմով կերակրում է արկդերում տեղափորված որդերը և բացելով արկդերի հատակը մաքրում է այն առանց թրթուրների հանգիստը խանգարելու: Բոլոր թրթուրները հավասար չափով են ստանում կեր, լույս, ջերմություն, խոնավություն: Հավասար չափով, քանի որ բոլորն էլ օրվա ընթացքում նույն չափով են գտնվում սենյակի սառը և տաք, լուսավոր և մութ մասերում: Իսկ դա ամենակարևորն է: Եթե նորածին թրթուրների համար ստեղծվում են միևնույն պայմանները, նրանց զարգացումն էլ տեղի է ունենում հավասարաչափ, և նրանք հարմարվում են մերենայական ռեժիմին, պայմաններին: Այսքանը: Իսկ այլ կերպ՝ այլ կերպ այլևս պետք չեն հատուկ մարդիկ, որ կերակրեն շերամին, մաքրեն նրանց «բնակավայրը», տեղափոխեն, պետք չեն և մեծ շինություններ, քանի որ նման մի մերենան իր մեջ է առնում այնքան շերամ, որքան կարող են հինգ շերամատում միասին:

Պարզ կառուցվածք ունի մերենան: Բայց ինչքան հնարամտություն, ինչքան խոր մտածված հաշվումներ, ինչքան մի՛ տք կա մետաղյա այդ պարզ մասերից յուրաքանչյուրի մեջ:

Եվ իսկուր չեր մասնագետների հիացմունքը, իսկուր չեր շերամապահության հարցերին նվիրված կայանում տեղի ունեցող համամիութենական խորհրդակցության մասնակիցների տված բարձր գնահատականը:

Շերամապահության միջինասիական ինստիտուտի դիրեկտորը հրճվանքով նկատում է.

— Սա ամենամեծ նվերն է ուսքեկ ժողովրդին:

Այս, առաջին հերթին ուսքեկ ժողովրդին, որովհետև միայն Ուկրենստանը տալիս է Սովետական Միության արտադրած բոնոժի մոտ կեսը: Իսկ եթե ավելացնենք և մյուս ռեսպուբլիկաները, եթե ծանոթանանք մերենայի բերելիք օգուտների նախնական հաշվումներին... Ահա դրանցից մի երկուսը: Այս մերենայի արմատավորումը արտադրության մեջ կտա շերամապահական կառույցների խիստ